

ԱՆԻ-ԿԱՄԱԽԸ ԽԵԹԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՁԱՆՈՒՄ*

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Պատմական Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Դարանաղյաց գավառի Անի ամրոցում, ըստ Ագաթանգեղոսի, գտնվում էր Զևս-Արամազդի մեհյանը¹։ Անին միաժամանակ Հայոց արքաների տոհմական գամբարանն էր²։ Անիի մերձակցությունը տեղադրված մի շարք բնակավայրերում (Երեզ/Երիզա = Երզնկա, Թիլ, Թորգան, Բագա(յա)ռիճ) նույն Ագաթանգեղոսի հիշատակած Հայոց գիցարանի առաջատար աստվածությունների սրբավայրերի առկայությունն անվիճելի վկայությունն է հօգուտ այն ենթադրության, որ հիշյալ տարածաշրջանը նախաքրիստոնեական Հայաստանի կարևորագույն պաշտամունքային կենտրոնն էր, մի բան, որ պահպանվեց նաև քրիստոնեությունն ընդունեցող հաջորդող շրջանում։ Այս առթիվ հատկանշական է Գրիգոր Լուսավորչի և նրա անմիջական հետնորդների Թորգան և Թիլ ավաններում թաղված լինելու փաստը և այն, որ այս տարածքը Լուսավորչի տոհմի ժառանգական տիրույթն էր³։

Առաջինը շվեյցարացի խեթագետ է. Ֆոռերն էր, որ 1926 թ. առաջարկեց խեթական տեքստերում հիշատակվող KUR^{URU} Kummaha «Կումմախա քաղաքի երկիրը» նույնացնել ժամանակակից Կեմախի հետ (– հայկ. Անի-Կամախ)⁴։ Այս տեսակետն ընդունվեց բոլոր հետազոտողների կողմից⁵։

* Հոդվածը «խեթական սեպագիր աղբյուրները Հայկական լեռնաշխարհի պատմության վերաբերյալ» ծրագրի մասն է, որը հեղինակը կատարել է Գերմանիայի Վյուրցբուրգի համալսարանի Հին արևելյան բանասիրության ինստիտուտում՝ «Ա. Ֆոն Հումբոլդտի հիմնադրամի» („Alexander von Humboldt Stiftung“) հովանավորությամբ (նոյեմբեր 2000 – փետրվար 2002)։

1 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս . Պատմութիւն Հայոց. էջմիածին – Տփղիս, 1909, էջ 785։ Ագաթանգեղոսի վկայությունը մասնավորեցնում է Փավստոս Բուղանդը, որը հիշատակում է Անիում Հայոց արքաներ Սանատրուկի և Խոսրովի դամբարանների գոյությունը (Փ ա վ ս տ ո ս Բ ո լ զ ա ն դ . Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1912, ԺԱ, ԻԴ)։

2 Փ ա վ ս տ ո ս Բ ո լ զ ա ն դ . ԺԱ, ԺԲ, ԻԴ։

3 E. F o r e r. Forschungen.I.1. Berlin, 1926, S.2; Hajasa-Azzi. – “Caucasica IX”, 1931, S. 2.

4 N. A d o n t z. Histoire d’Armenie. Paris, 1946, p. 40f.; Гр. К а п а н ц я н. Хаїаса – колыбель армян. Ереван, 1948, с. 18сл.; J. G a r s t a n g. Samuha and Malatya. – “Journal of Near Eastern Studies”, 1, 1942, p. 45If.; i d e m. The Location of Pahhuwa. – “Liverpool Annals of Archaeology and Anthropology” 28, 1948, p. 53; Я. М а н а н д я н. О некоторых спорных проблемах истории древней Армении. Ереван, 1956, с. 76; J. G a r s t a n g and O. R. G u r n e y. The Geography of the Hittite Empire. London, 1959, p. 35 և այլն։ Հայագիտական հրատարակություններում հայկ. Կամախի հետ է նույնացվում նաև KUB XXVI 39 I(?) 29-ում հիշատակվող պակասավոր^{URU} Kam[.....] տեղանունը (N. A d o n t z. Նշվ. աշխ., Г. Б. Д ж а у к я н. Хаїасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964, с. 82сл.). Ն. Ադոնցն այն կամայականորեն վերականգնում էր որպես Kam(uha)։ Հ. Մանանդյանը նույնպես այս տեղանունը դիտում է

Միայն Ա. Գյոթցենն էր, որ իր վաղ ուսումնասիրություններից մեկում առաջարկեց խեթ. Կումմախի համադրել ասորեստանյան տեքստերի Կումմուխի (^{URU}Kummuh(i) – անտիկ դարաշրջանի Կումմագենե) հետ⁵:

Հոգևածում կներկայացվեն Կումմախի հիշատակող մ.թ.ա. XV–XIII դդ. թվագրվող խեթական բոլոր սեպագիր տեքստերի համապատասխան հատվածները, որոնք հնարավորություն կընձեռեն լրացնելու և խորացնելու հայագիտական ուսումնասիրություններում այս կարևոր տարածքի ունեցած դերի մասին պատկերացումները: Հարկ է նշել, որ որոշ տեքստեր առաջին անգամ են մտնում հայագիտական հետազոտությունների շրջանառության մեջ: Տեքստերը ներկայացվում են ժամանակագրական հաջորդականությամբ: Որոշ դեպքերում դրանց ճշգրիտ թվագրումը այս կամ այն խեթական արքայի կառավարման շրջանով հենվում է զուտ լեզվահնագրական հիմքի վրա:

1. KUB XXIII 72+⁶

Այս տեքստը հստակ թվագրվում է խեթական արքա Արնուվանդաս I-ի կառավարման շրջանով (մոտ. մ.թ.ա. XV դ. վերջ – XIV դ. սկիզբ)⁷: Այն ներկայացնում է Վերին Եփրատի ավազանի մի խումբ երկրների հետ խեթական մայրաքաղաք Խաթթուսում Արնուվանդասի կնքած պայմանա-

ոչ թե եփրատյան Կամախի, այլ Բիթլիսից մոտ 8 կմ հեռու գտնվող ժամանակակից Կամախ գյուղի համարժեքը (Я. М а н а д я н. Նշվ. աշխ., էջ 102 և հտ.):

5 A. G o e t z e. Kizzuwatna and the Problem of Hittite Geography. New Haven, 1940, p. 5 n. 21. Կումմախի նույնացումը Կումմագենեի հետ առկա էր նաև Վ. Խաչատրյանի վաղ շրջանի ուսումնասիրության մեջ (Восточные провинции Хеттской империи. Ереван, 1971, с. 115сл.), սակայն հետագայում նա ընդունեց Կումմախա-Կամախ համընդհանուր ընդունելություն գտած տեսակետը (Հայաստանը մ.թ.ա. XV–VII դարերում. Երևան, 1998, էջ 56): Այսօր հետազոտողների շրջանում այս համադրությունը որեէ առարկության չի հանդիպում, քանզի հենվում է բավարար տեքստային վկայությունների վրա:

6 Տեքստը կազմված է երկկողմ գրությունը մեկ աղյուսակից և մեզ է հասել բնագրով (J. K l i n g e r und E. N e u. War die Erste Computer-Analyse des Hethitischen verfehlt? – "Hethitica" X, 1990, S. 143): Հիմնական տեքստը, որը հայտնի էր խեթական մայրաքաղաքի պեղումներից գեո. Ն. Վինկլերի և Մաքրիդի բեյի օրոք, վերջին տասնամյակներում հարստացավ երեք նոր կցարեկորներով (1624/u? [H. A. H o f f n e r. A Join to the Hittite Mita-text. – "Journal of Cuneiform Studies" 28, 1976, p. 60ff.], KUB XL [H. O t t e n - C h r. R ü s t e r. 1968] 10 և 141/w [վերջինս գեոևս հրատարակված է է]): Տեքստի մասնակի թարգմանությունը առաջին անգամ կատարել է Ա. Ն. Սեյսը (A. H. S a y c e. Hittite and Moscho-Hittite. – "Revue hittite et asianique" 1, fasc. 1, p. 1ff.), այնուհետև ամբողջությամբ (առանց հետագայում ի հայտ եկած երեք կցարեկորների)՝ Օ. Ր. Գրընթն (O. R. G u r n e y. Mita of Pahhuwa. – "Liverpool Annals of Archaeology and Anthropology" 48, 1948, p. 32ff.). Պայմանագրի տեքստի ամբողջական գիտական հրատարակությունը ամփոփված է մեր «Պախիսուվացի Միտան» անտիպ մենագրության մեջ (Համառոտ տարբերակը՝ Armuwandas I in the East. - Studi Micenei ed Egeo-Anatolici (Հանձնված է հրատարակության):

7 Պայմանագրի թվագրումը Արնուվանդաս I-ի կառավարման շրջանով պատկանում է Ֆ. Ն. Յ. Հոուվինք տեն Կատեին (Ph. H. J. H o u w i n k t e n C a t e. The Records of the Early Hittite Empire. Istanbul, 1970, p. 61f.): Նախկինում այն թվագրվում էր ինթական տեքստի հարևան գոյություն վերջին շրջանով՝ մ.թ.ա. XIII դ. վերջին քառորդ (Արնուվանդաս III), որ առկա է նաև հայագիտական հետազոտություններում, ինչի մասին տես մեր՝ ինթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա. XV դարում. – «Պատմա-բանասիրական հանդես», 2000, № 3, էջ 161–162:

գիրը⁸: Տեքստում հիշատակվում է Խաթթուսասի ժողովից ինչ-որ ժամանակ առաջ Պախսուվա երկրում սկսված ապստամբությունը, որը, դատելով որոշ հատվածներից, դեռևս վերջնականապես չէր ավարտվել և որի ետնախորքում էլ խեթական արքան Խաթթուսաս էր հրավիրել տարածաշրջանի երկրների ներկայացուցիչներին:

ԴԿ

31) [..... an-da pa-a-an]-za nu-kan pa-a-ir SA KUR^{URU} Kum-ma-a-ha URU.DIDL^{HI.A} ku-e-nir

32) [.....]-ta U LU^{MEŠ URU} Ti-im-mi-ia

43) SA^{GIŠ} UTU^{ŠI}-ia A-NA^{GIŠ} TUKUL ku-i-e-es pí-ra-an ar-ha is-par-te-er LU^{MEŠ URU} A-ar-hi-i-ta

44) [.....] ku-is su-ma-a-as A-NA LU^{MEŠ URU} Pa-ah-hu-wa an-da u-wa-an-za na-an hu-u-ma-an-ta-an an-da

45) [..... DAM^{MEŠ} -SU-N] U DUMU^{MEŠ} -[SU-NU]x

31) «[.....] նրանք [գնաց]ին (և) Կումմախայի քաղաքները ոչնչացրեցին,

32) [.....] և Տիմմիայի ժողովրդին»:

43) «Եվ նրանք ովքեր Արևի գեների առջևից փախել են՝ արխիտացիները,

44) [.....] ովքեր ձեր՝ Պախսուվայի ժողովրդի մոտ են եկել, նրանց բռնորդին

45) [..... իրենց կանան]ց, [իրենց] որդիների [հետ միասին]»

ՀԿ

16) SA^{GIŠ} U[TU^{ŠI}]-ia ku-it tu-uz-zi-is I-NA KUR^{URU} Kum-ma-ha e-es-ta nu-[uš-si ku-is]

17) pí-ra-an is-pár-za-[as-ta A]NA LU^{MEŠ URU} Pa-ah-hu-wa-ma-as-kan pa-it na-an hu-u-ma-an-ta-[an pa-ra-a pí-ia-an-zi]

16) «.....և Ար[ևի] զորքը, երբ Կումմախայում էր, [ովքեր]

17) փախ[ան] (և) Պախսուվայի ժողովրդի մոտ դնացին, նրանց բռնորդին վերադարձնեն»:

Հղված առաջին հատվածում հիշատակվում են պախսուվացի ապստամբների ասպատակությունները՝ Կումմախայի և Տիմմիայի ուղղութ-

8 Իր կառուցվածքով սա ավելի շուտ հիշեցնում է նախկինում գոյություն ունեցած պայմանագիրը՝ հստակ արտահայտված վերջնագրային ձևակերպումներով և նրբերանգներով, և այդ է պատճառը, որ արևմտյան հրատարակություններում սույն պայմանագիրը որակվում է որպես վերինեփրատյան երկրների ներկայացուցիչների առջև խեթական արքայի ունեցած ելույթի «արձանագրություն» (օրինակ, J. K l i n g e r. Zur Historizität einiger hethitischer Omnia – “Altorientalische Forschungen”, Bd. 25, 1998/1, S. 110 Anm. 20): Օ. Գրոնին, Նշելով «պայմանագրի» կառուցվածքային ակնհայտ նմանությունը «Մադագոսկարի մեղանչանքի» հետ, գտնում էր, որ վերջինիս պես այս տեքստը նույնպես չի կարելի պայմանագիր համարել, քանի որ այստեղ ևս բացակայում է փոխադարձության սկզբունքը (O. R. G u r n e y. Նշվ. աշխ., էջ 33):

յամբ, որին նախորդել էին նրանց հարձակումները Իսուվայի վրա: Հաջորդ երկու հատվածները, որոնք պախխուվացիներից խեթական արքայի պահանջների մասն են, ակնհայտորեն շարադրում են միևնույն իրադարձությունը: Երկրորդում հիշատակվում է խեթական զորքի արշավանքը և հակառակորդ արխիտացիների ապաստանելը Պախխուվայում, իսկ երրորդում՝ արշավանքը Կուլմմախա և ապաստամբների հեռանալը Պախխուվա: Արխիտայի Ամպրոպի աստվածի հիշատակությունը KUB XXVI 39-ում որպես Հայաստայի քաղաքներից մեկի աստվածություն⁹, թույլ է տալիս ենթադրելու, որ Կուլմմախան և տվյալ Հայաստական քաղաքը կարող էին գտնվել հարևանությունում¹⁰:

2. IBoT I 36¹¹

Տեքստը լեզվահնարական հիմքի վրա թվագրվում է, այսպես կոչված, «միջին խեթական դարաշրջանով»¹², խեթական արքա Թուգխալիյաս I(II)-ից մինչև մոտավորապես Թուգխալիյաս III, առավել հավանական է նախորդ տեքստի հետ ժամանակագրական առնչակցությունը, այսինքն, նույն Արնուվանդաս I-ի շրջանը¹³:

Այս ընդարձակ տեքստը ամբողջությամբ նվիրված է խեթական արքայի պալատում թիկնապահ ջոկատի՝ ամենօրյա պահակային ծառայողական պարտականությունների նկարագրությունը: Արքայական թիկնազորի կազմում, ըստ տեքստի, գտնվում էին նաև տերություն արևելյան շրջանների զինվորներ:

9 Տեքստի հրատարակությունը՝ E. Forger. – “Caucasica” IX, 1931, S. 6ff.:

10 Այս քաղաքը ևս մեկ անգամ հիշատակվում է KUB XXVI 62-ում (այսպես կոչված՝ «Զինվորների ցուցակ», միայն զիտական տառադարձմամբ հրատարակությունը՝ E. von S ch u l e r. Die Kaskaer. Berlin, 1965, S. 142ff.): ինթական տերության հյուսիսարևելյան և արևելյան շրջաններին հարող երկրների շարքում Արխիտա քաղաքը (^{18U} Erhita ձևով) վկայված է Սալա քաղաքից հետո՝ Լիտտա և Տեմիյա (= KUB XXIII 72+-ում՝ Տիմիյա) քաղաքներից առաջ: Առայժմ միայն Վ. Խաչատրյանն է փորձել տեղագրել Արխիտան՝ Մոփքի Քղի քաղաքից հյուսիս-արևելք (Восточные провинции, с. 109 сл., 140), Պախխուվայում, Հաշտեանքի երիզա ավանը (Հայաստանը մ.թ.ա. XV–VII դարերում, էջ 36, 88, 90):

11 Տեքստի ամբողջական գիտական հրատարակությունը տե՛ս L. J a k o b - R o s t. Beitrage zum hethitischen Hofzeremoniell (IBoT I 36). – “Mitteilungen des Instituts für Orientforschung” 11, 1965, S. 166ff.; H. G. G ü t e r b o c k a n d T h. P. J. v a n d e n H o u t. The Hittite Instruction for the Royal Bodyguard. Chicago, 1991 (= Assyriological Studies 24), իսկ առանձին ընդարձակ հատվածները՝ S. A l p. Untersuchungen zu den Beamtentamen ins hethitischen Festzeremoniell. Leipzig, 1940, S. 6ff. և ն ու յ ն ի՝ Beitrage zur Erforschung des hethitischen Tempel. Ankara, 1983, S. 10f., 106ff.:

12 Այս տերմինի համար տե՛ս E. N e u. Zum sprachlichen Alter des Hukkana-Vertrages – “Zeitschrift für vergleichende Sprachforschung” 93, 1979, S. 82; Ph. H. J. H o u w i n k t e n C a t e. The Records..., p. 3f.; Ա. Կամմենհուբերն առաջարկում էր «վաղ նոր խեթերեն» (“Frühjungthethitisch”) կամ արխաիկ նոր խեթերեն» (“Archaischjungthethitisch”) (A. K a m m e n h u b e r. Die Sprachstufen des Hethitischen. – “Zeitschrift für vergleichende Sprachforschung” 83, 1969, S. 281):

13 Ֆ. Հոուվինք տե՛ս Կատեն այս տեքստը գիտում է որպես «հնարավոր է միջին խեթական» (The Records, p. 6), մոտավորապես Թուգխալիյաս I-ից մինչև Թուգխալիյաս III-ի կառավարումը ներառյալ:

ՀԿ III

- 35) ma-a-an a-ra-ah-zi-na-an-ma ku-in-ki ERIN^{MI 5}-an na-as-su ERIN^{MEŠ}
^{URU}Qa-a-aš-ga ku-u-ru-ra-aš
 36) na-aš-ma ERIN^{MEŠ} ^{URU}Kum-ma-ha ku-i-na-an im-ma ku-in ERIN^{MEŠ}
 LUGAL-us hal-za-a-i
 37) nu LU^{MEŠ} ME-ŠE-DI-TIM EGIR-an-da hu-u-ma-an-te-es pa-a-an-zi ma-
 a-[a]n-[s]a-ma-aš
 38) ^{GIŠ}SUKUR^{HI.A}-ma te-pa-u-e-eš-zi na-aš-ta A-NA LU^{MEŠ} SUKUR <<HI.A>>
^{GIŠ}SU[KUR^{HI.A}]
 39) ar-ha ta-an-zi na-at EGIR-an-da pa-a-an-zi na-at-za hu-u-la-li-ia-u-wa-ar
 40) hal-zi-is-sa-an-zi

ՀԿ III

- 35) Իսկ երբ ինչ-որ օտար ջոկատներ թշնամի կասկերի ջոկատներ,
 36) Կոմմախայի ջոկատներ կամ ինչպիսի ջոկատներ էլ որ լինեն, ար-
 քան կանչի,
 37) ապա բոլոր պահակները կհետևեն նրանց: Բայց եթե նրանց համար
 38) նիզակները քիչ են, նրանք նիզակակիրներից նիզակներ
 39) կվերցնեն և կհետևեն (նրանց): Նրանք դա շրջափակում են
 40) կոչում:

3. KUB XIX 11 IV¹⁴

Սուպպիլուլիումաս I-ի դործունեությունը նվիրված՝ Մուրսիլիս II-ի կազմած ընդարձակ տեքստին¹⁵ պատկանող այս դրվագում նկարագրվում է դեռևս ապագա արքայի հոր՝ Թուրխալիյաս III-ի դիտավորությունը (նաև արքայազն Սուպպիլուլիումասի մասնակցությունը) արշավանքը դեպի Հայաստ: Վերջինս Հայաստյի հարևան կասկերի դեմ խեթերի պատժիչ արշավանքների շարունակությունն է: Դժբախտաբար, տեքստն ընդհատվում է այն մասում, երբ խեթական զորքը հասնում է Կոմմախա, որտեղ նրա դեմ դուրս է դալիս Հայաստյի արքա Կարաննիսը՝ ճակատամարտ տալու նպատակով:

- 41) ma-ah-ha-an-ma A-BI A-BI-IA a-pé-ez EGIR-[pa u]-it
 42) na-aš I-NA KUR^{URU}Ha-ia-sa pa-it A-BU-IA-[ia-aš-si ka]t-ta-an-pāt e-[eš-ta]
 43) nu ma-ah-ha-an A-BI A-BI-IA I-NA KUR^{URU}Ha-[ia-sa a]-ar-[aš]
 44) nu-uš-si ^mKar-an-ni-is LUGAL KUR^{URU}Ha-ia-sa [.....]
 45) [SA-PA]L(?) ^{URU}Kum-ma-ha za-ah-hi-i[a]

14 Տեքստի ամբողջական հրատարակությունը՝ H. G. G u t e r b o c k. The Deeds of Suppiluliumas, as told by his Son, Mursilis.- "Journal of Cuneiform Studies" 10, 1956, p. 65f.

15 Այս արշավանքի հետ կապված իրադարձությունների քննարկումը տես Յ. Մ ա - ն ա ն ճ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 73ՏԸ.; В. Н. Х а ч а т р я н. Восточные провинции..., с. 143ՏԸ.; ն ու լ յ ն ի՝ Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 55-56.

- 41) «Իսկ երբ պապս այնտեղից վեր[ադար]ձավ,
- 42) նա Հայասա գնաց: Հայրս [էլ նրա հետ] է[ր]:
- 43) Եվ երբ պապս Հա[յասա հ]ասա[վ],
- 44) Նրա դեմ Կարաննիսը՝ Հայասայի արքան [.....]
- 45) Կոմմախա[յում] ճակատամարտի [.....]:»:

4ա. KBo II 9 + KUB XV 35

Այս տեքստը մեկն է երեք տարբերակներով պահպանված տեքստերի խմբից, որը մասնագիտական գրականություն մեջ ստացել է «նինվեի Իշտար աստվածուհու ծեսը» անվանումը¹⁶: Այն ներկայացնում է ծիսական գործողություն, որի նպատակն է Խաթթիի հարևան երկրների աստվածներին երկիր հրավիրել: Տեքստում առկա ընդհանուր համատեքստը հուշում է, որ այն կազմված է մի ժամանակ, երբ Խաթթիական տերությունը գտնվում էր ծայրաստիճան ծանր իրավիճակում (բնակչության թվաքանակի անկում, համաճարակ և այլն): Թվարկվում են մեծաքանակ երկրներ ինչպես Խաթթիի կազմում, այնպես էլ հարևաններից: Հարկ է նշել, որ տեքստի ճշգրիտ թվագրումն առայժմ հնարավոր չէ¹⁷:

ԴԿ I

- 1') [.....^{UR3}U-g[a]-[r]i-[i]t-ta-za e-h[u].....]
- 2') [.....e-hu^{URU}Du-na-na-pa-az e-hu [...]
- 3')^{URU}[..... e-hu^{URU}A-la-al-ha-a[z e-hu]
- 4')^{URU}X[.....^{URU}Zi-i-du-na-az e-hu^{URU}.....e-hu]
- 5')^{URU}Nu-[ha-as-s]a-za e-hu^{URU}Ku-ul-zi-la-az e-hu^{URU}..... e-hu]
- 6')^{URU}Ku-un-zu-du-ha-az e-hu^{URU}As-sur-az e-hu^{URU}..... e-hu]
- 7')^{URU}[P]i-ga-az e-hu da-pi-za KUR-e-za e-hu^{URU}A-la-si-i[a-az e-hu]
- 8')^{URU}A-al-zi-ia-az e-hu^{URU}Pa-pa-an-ha-az e-hu^{URU}..... e-hu]
- 9')^{URU}Kum-ma-ha-az e-hu^{URU}Ha-ia-sa-az e-hu^{URU}[..... e-hu]
- 10')^{URU}Kar-ki-ia-az e-hu KUR^{URU}Ar-za-wa-az e-[hu.....]
- 11') KUR^{URU}Ma-sa-az e-hu KUR^{URU}Ku-un-ta-ra-az e-hu [.....]
- 12')^{URU}U-ra-az e-hu^{URU}Lu-uh-ma-az e-hu [.....]
- 13')^{URU}Pa-r-ta-hu-i-na-az e-hu^{URU}Ka-ma-la-az [e-hu.....]

ԴԿ I

- 1') [.....-ից արի], Ուգ[ար]իտից արի, [.....],
- 2') [.....-ից արի], Դունանապայից արի, [.....],

16 E. L a r o c h e. Catalogue des Textes Hittites. Paris, 1971 (=CTH), N716: Այն առայժմ չունի ամբողջական գիտական հրատարակություն: Տեքստի առանձին հատվածներ հրատարակված են Ֆ. Ջոմմերի (F. S o m m e r. Ein hethitisches Gebet.— “Zeitschrift für Assyriologie und vorderasiatische Archaologie” 33, 1921, S. 96ff.) և Հ. Թ. Բոսսերտի (H. T h. B o s s e r t. Asia. Ankara, 1946, S. 34ff.) կողմից:

17 Տեքստում կիրառված նշանների հնագրությունը և բառերի գրությունն առանձնահատկությունները բացառում են «միջին խաթթիական» փուլը (Թուրխալիյաս I(II) և Արնուվանգաս I): Առավել հավանական է Մուրսիլիս II-ի կամ Խաթթուսիլիս III – Թուրխալիյաս IV ժամանակահատվածը, մ.թ.ա. XIII դ.:

- 3') [.....-ից արի], Ալալիայի[ց արի],
- 4') X[.....-ից արի], Միդոնայից արի, [.....],
- 5') Նու[խաշշեի]ց արի, Կուլցիլայից արի, [.....]
- 6') Կունցուգուխայից արի, Աշշուրից արի, [.....]
- 7') [Պ]իգայից արի, բոլոր երկրներից արի, Ալասի[յայից արի],
- 8') Ալզիլայից արի, Պապանիայից արի,
- 9') Կումմախայից արի, Հայասայից արի, [.....]
- 10') Կարկիլայից արի, Արցավայից արի [.....]
- 11') Մասայից արի, Կունտարայից [արի]
- 12') Ուրայից արի, Լուխմայից արի [.....]
- 13') Պարտախուհինայից արի, Կամ(մ)ալայից արի [.....]

***Ցուցակում նշված երկրները՝**

Ուգարիտ, Դունանայա, Ալալախ (տեքստում՝ Ալալխա), Միդոն (Միդոնա), Նուխաշշե, Կուլցիլա (Ուկուլցատ), Կունցուգուխա, Աշշուր, Պիգա, Ալասիյա (Կիպրոս), Ալզի (Ալզիլյա), Պապ(ան)իսի (Պապանիա), Կումմախա¹⁸, Հայասա, Կարկիլա, Արցավա, Մասա, Կունտարա, Ուրա (Հայասայի Ուրա քաղաքի համանուն քաղաքը Դաշտային Կիլիկիայում), Լուխմա, Պարտախուհինա, Մասա:

4բ. KUB XV 34¹⁹

Հարևան երկրների աստվածներին խաթթի կանչելու ծեսը: Տեքստում հիշատակվում են նախորդ տեքստում առկա երկրները՝ որոշակիորեն փոփոխված հերթականությամբ:

ԴԿ I

57) [KUR^{URU}Zu-un-zu-r]a KUR^{URU}A-as-sur KUR^{URU}KA.DINGIR.RA KUR^{URU}Sa-an-ha-ra KUR^{URU}Mi-iz-r[i]

58) [KUR^{URU}A-la-s]i-ia KUR^{URU}A-al-zi-ia KUR^{URU}Pa-pa-ah-hi KUR^{URU}Kum-ma-ha

59) [KUR^{URU}Ha-ia-s]a KUR^{URU}U-ul-lu-wa KUR^{URU}Ar-za-[(u)-wa]

57) [Ցունցուր]ա, Աշշուր, Բաբելոն, Շանխարա (= Բաբելոնիա - Ա.Ք.), Եգիպտոս,

58) [Ալաս]իա, Ալծիլյա, Պապախիսի, Կումմախա,

59) [Հայաս]ա Ուլլուվա, Արծա[վա,]

¹⁸ Տեքստի այս հատվածի հրատարակիչը Կումմախայի գրությունն առաջին նշանը ընթերցել էր pi (KUR^{URU}Pi-ma-ha, F. Sommer. Նշվ. աշխ., էջ 96):

¹⁹ CTH 483. տեքստի ամբողջական հրատարակությունը՝ L. Z u n t z. Un testo ittita di scongiuri. - In: "Atti del Reale Istituto Veneto di scienze, lettere ed Arte", T. XCVI, 1937, P. 2, p. 477ff. (գիտական տառադարձում և թարգմանություն); J. F r i e d r i c h. Hethitisches Elementarbuch. II Teil. Heidelberg, 1948, S.31ff.(միայն գիտական տառադարձումը); A. G o e t z e. - In: "Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament" (ed. J. B. Pritchard). Princeton, 1950, p. 351ff. (միայն թարգմանությունը):

*Թվարկված երկրները

Յունացուրա, Աշշուր, Բաբելոն, Բաբելոնիա (Շանխարա), Եգիպտոս (Միծ-րի), Կիպրոս, Ալգի, Պապ(ան)իսի (Պապախիսի), Ուլլուվա, Արցավա:

5. KUB XL 83

Այս տեքստը պատկանում է խեթական սեպագրական կորպուսում լավ վկայված տեքստերի մի խմբի, որը ստացել է պայմանական «Դատական պրոցես» անվանումը²⁰: Այստեղ նկարագրվում են երեք անձնավորութ-թյունների նկատմամբ Կոնմախայի մոտ գտնվող անտառում ոմն Տակի-շարումայի և Mana-DUGUD (վերջինս կին է) կողմից սև մոզուլթյան ակ-տի իրականացման մանրամասները, նպատակը սույն անձանց մահն է: Դատելով վերոհիշյալ եռյակի թեոֆոր անուններից, դրանք բարձրաստի-ճան անձինք են եղել²¹:

ԴԿ

- 9') [... I-NA UD.x.]KAM-ti GIM-an GE₆-an-za ki-sa-at
 10') [.....^{URU}K]um-ma-ha SA^{GIŠ}TIR^mQa-ze-e-ra ki-i DÜ-at
 11') [.....]-ir nu-wa^fHi-la-ma-ad-du-un MUNUS.SUHUR.LÁ
 12') [.....]x-e-er UM-MA^fHi-la-ma-ad-du-un-MA
 13') [.....SA?] ^mQa-ze-e-ra-ia^{MUNUS}u-da-ti-is
 14') [.....] III ALAM^{MEŠ} DUH.LAL^{UZU}I.UDU DÜ-ir
 15') [..... IS]-TU IM ha-ne-es-se-er nu-[w]a A-NA I ALAM
 16') [..... A-NA] I ALAM-ma-wa-kan SUM^mGA[L]-UR.MAH ME-ir
 17') [.....^mLUGAL-^d]XXX-uh ti-i-e-er

ԴԿ

- 9') [..... X օրվա] գիշերը նա արեց:
 10') [..... Կ]ոնմախայի մոտ գտնվող Քածերայի անտառում այդ արեց:
 11') [.....] եվ ինչամադդունը՝ ստրկուհին,
 12') [.....]-եց: Այսպես (ասում է) այդ ինչամադդունը.
 13') [«.....»] Քածերայի ուղատիսը,
 14') [.....] երեք պատկերներ մեղրամոմով (և) ոչխարի ճարպով պատրաստեցին:
 15') [.....] կավ[ով] պատեցին: «Մի պատկերի վրա

20 CTH 293-297. Հղվող տեքստը ամբողջությամբ հրատարակված է Ռ. Վերների կողմից (R. W e r n e r. Hethitische Gerichtsprotokolle. Wiesbaden, 1967 [= "Studien zu den Boghazkoy-Texten" 4], S. 64ff.):

21 Դրանցից ^mLUGAL-^dXXX-ը հագիվ թե լինի մեկ այլ անձ, քան Սուպպիլուլիումաս I-ի որդին՝ Կարգամիսի արքա Շարրիկուշուրը, որը, ըստ Մուրսիլիս II-ի մի տեքստի (KUB XIV 4), հանկարծամահ եղավ արքայի կառավարման 10-րդ տարում: Այս տեքստի ամբողջական հրատարակությունը ընդարձակ պատմական հետազոտությամբ «Նոր նյութեր Մուրսիլիս II-ի հայաստան արշավանքների վերաբերյալ» հոդվածը պատրաստվում է հրատարակության:

16') [... անունը դրեցին], իսկ մյուս պատկերի [վրա] GAL-UR.MAH-ի անունը դրեցին:

17) [.....Նարրի]-կուչուխի [անունը] դրեցին:

*16-րդ տողի լակունայում առաջին անձնավորության անունը պիտի լիներ:

6. KUB LV 1

Այս րնդարձակ տեքստում, որն առայժմ հրատարակված է միայն ինքնադիր եղանակով, թվարկվում են խեթական տերութայան տարբեր շրջանների բնակավայրերում գտնվող աստվածությունների պաշտամունքային պրոցեսի խախտման դեպքերը: Դատելով յուրաքանչյուր խախտումից հետո աղյուսակի համապատասխան մասում գրալի դատարկ չգրված տարածքի առկայությունից, նախատեսված է եղել յուրաքանչյուր դեպքի համար այնտեղ գրանցել դուշակային հարցման արդյունքները, սակայն ինչ-ինչ պատճառներով, դա չի կատարվել²²: Տեքստը պայեոգրաֆիկ հիմքի վրա թվագրվում է մ.թ.ա. XIII դ., իսկ թվարկված III-ի կամ Թուրխալի-յաս IV-ի կառավարման շրջանով²³:

ԴԿ II

7') nu-wa A-NA DINGIR^{LIM}

8') EZEN₄ ITU IS-TU [.....^(L^U)] EN.NU.UN HUR.SAG^{URU} Ku-ma-ha e-es-ten

9') ki-nu-un-ma-wa-az A.ŠÀ A.GA[R.?.] É.GAL hé-kur Pi-ir-wa ME-ir

10') [nu]-wa A-NA DINGIR^{LIM} EZEN₄ U-UL e-es-sa-an-zi

7') «Աստծուն

8') ամենամայա տոնակատարությունը կոմմախայի լեռան պահակը [.....] միջոցով հոգում էր:

9') Բայց այժմ Պիրվա աստծո խեթերի պալատի գաշտը [և] արոտավայրը(?) վերցրել են

10') [և] աստծուն տոնակատարություն չեն տալիս»:

*^{13A4}hekur-ը լեռնային (թերևս ժայռափոր) տաճար է²⁴:

22 Ենթադրվում է, որ պատճառը գուշակային հետաքննության ուղ անցկացումն է, որի ընթացքում կավե սալիկը չորացել է և այլևս հնարավոր չի եղել արդյունքները գրանցել (A. U n a l. Beschprech. zu KUB LV 1.- "Bibliotheca Orientalis" 44, 1987, p. 474f.):

23 Նույն տեղում:

24 Խեթական այս կարևոր ծիսապաշտամունքային կառույցի մասին տե՛ս F. I m - p a r a t i. Le istituzioni del ^{NA4}hekur e il potere centrale ittita.- "Studi Micenei ed Egeo-Anatolici" 18, 1977, p.39ff.; տերմինի իմաստի և ստուգաբանության մասին տե՛ս J. P u h - v e l. Hittite Etymological Dictionary. Vol. 3. Berlin - New York, 1991. p. 287ff.

7. IBoT I 33²⁵

Գուշակային բնույթի տեքստ է, որտեղ հենց սկզբից հիշատակվում է Կոնմմախայում կատարված գուշակութունը, որը խեթական արքայի համար կարևորություն է ներկայացնում:

ԴԿ

- 1) e-ni-za ku-it GISKIM^{III.A} HUL^{III.A} INA^{URU} Kum-ma-hi ki-ik-kiš-ta-at
- 2) nu-za a-pât-tén ku-it EGIR-an HUL DÜ-at ki-nu-un-ma-za nam-ma ku-it
- 3) GISKIM^{III.A} H[UL]^{III.A} ki-ik-kiš-ta-ri ŠA SAG.DU^d UTU^{ŠI} HUL
- 4) i-še-eh-hi-iš-kán-zi nu MUS.SAG.DU^d UTU^{ŠI} NU.SIG₅-ah-du

.....

- 1) «Այդ ինչ չար նախանշաններ եղան Կոնմմախայում:
- 2) Եվ այնտեղ հետո չարիք պատահեց: Իսկ այժմ կրկին
- 3) չ[ար] նախանշաններ են եղել, Արևի անձի համար չարիք
- 4) է նախատեսվում: Օձի գլուխը Արևի համար թող անրարենպաստ լինի»:

8. KUB XXXVIII 12²⁶

Այս ինվենտարային տեքստը Կարախնա քաղաքի²⁷ Պահապան աստծուն և մյուս աստվածներին տրվող երկրպագութունների ցուցակն է, որտեղ հիշատակվում են նաև շատ այլ քաղաքների աստվածություններին տրվող մատուցումները:

ՀԿ

- 14') ^dU tak-kán-ti-pa "LAMMA-aš "Kip-pa-mu-la-aš
- 15') ^dKu-pa-pa-aš ^dU^{URU} Kum-ma-ha ^dU A^{MUSEN}
- 16') ŠA^{GIS} KÁ.GAL ^dSa-lu-wa-né-es ^dU an-da-an u-wa-an-za

25 Հրատարակությունը՝ E. L a r o c h e. Lecanomancie hittite. – "Revue asiatique" 52, 1958, p. 152ff.:

26 Այս տեքստը (CTH 517) պահպանվել է երկու տարբերակներով (A = KUB XXXVIII 12 և B = KUB XXXVIII 15), որոնցից միայն KUB XXXVIII 12-ում է վկայված Կոնմմախայի Ամպրոպի աստվածը: KUB XXXVIII 12-ը առայժմ հրատարակված է միայն մասնակիորեն (M. D a r g a. Über das Wesen des HÜWASI-Steines nach hethitischen Kultinventaren. – "Revue hittite et asianique" 27, fasc.84-85, 1969, S. 5ff. [ն ու յ ն ի թուրքերեն տարբերակը Turk Tarih Kurumu Belleten 33, 1969]):

27 Կարախնան (վկայված են նաև Գարախնա, Կարախնա ձևերը) խեթական տերության կարևորագույն վարչական և կրոնական կենտրոններից էր, որի ճշգրիտ տեղագրությունը դեռևս պարզ չէ: Առավել ընդունելի են հետևյալ տեղագրությունները՝ ա) Չորումի և Ամասիայի միջև (J. G a r s t a n g a n d O. R. G u r n e y, GHE, p. 25), բ) Թուրխալի և Թոքատի միջև՝ Յեշիլըրմակի ավազանում (A. U n a l. Hattušili III., I. 1, 1974, S. 193f.) և գ) Սամուխայի մոտ (A. M. D i n ç o l u n d M. D a r g a. – "Anatolica" 3, 1969-70, S. 118): Ի դեպ, Վ. Խաչատրյանի վաղ հետազոտություններից մեկում Կարախնա քաղաքի անվան մասնակիորեն սխալ ընթերցման հետևանքով KUB XXXI 68 ՀԿ 18-ում ստացվել է Կամախնա (^{𐎧𐎫𐎠𐎵}Ka-ma-ha-na, ^{𐎧𐎫𐎠𐎵}Ka-ra-ha-na-ի վրխարեն), որը և նույնացվել է Կոնմմախայի հետ (Восточные провинции..., с. 50сл., 116); այս նույն աշխատությունում Կոնմմախան դիտվում է որպես անտիկ աղբյուրների Կոնմագեննի խեթական համարժեք:

- 17') ^dU ^{URU}Wa-al-ma ^dU ^{URU}Ne-ri-ik
- 18') ^dU ^{URU}Tar-ma-li-ia ^dLIS GIBIL ^dU pi-ha-aš-[š]a-as-ši-eš
- 19') ^dU HI.HI ^dU pi-ha-i-mi ^dU mi-ia-an-na-aš
- 20') ^dIa-ar-ri-iš ^{MD}Kaz-za-ru-na-i-liš
- 21') ^dLUGAL-ma-as ^dHal-ki-iš ŠU.NIGIN 17 DINGIR ^{MEŠ}

14') «Երկրի (Հողի/անդրաշխարհի) Ամպրոպի աստվածը, Կիսկամուլան,

15') Կուլբարան, Կուլմախայի Ամպրոպի աստվածը, «արծվի» Ամպրոպի աստվածը

16') «Քաղաքի դարպասի» Աալուվանի աստվածությունները, «ներս եկած» Ամպրոպի աստվածը,

17') Վալմայի Ամպրոպի աստվածը, Ներիկի Ամպրոպի աստվածը,

18') Տարմալիայի Ամպրոպի աստվածը, «նոր» Իշտարը, pihassašši Ամպրոպի աստվածները,

19') HI.HI Ամպրոպի աստվածը, pihaimi Ամպրոպի աստվածը, «բարդավաճման» Ամպրոպի աստվածը,

20') Յարրին, Կացցարունաիլի դետը,

21') Շարրուման, Խալկին. ընդամենը՝ 17 աստվածներ»:

Ստորև հղվող ևս երկու տեքստերը (1014 և Bo 4264) առայժմ հրատարակված չեն, ըստ Հ. Օտտենի, դրանք մ.թ.ա. XIII դ. արքայական նամակների բեկորներ են²⁸:

9. 1014

Հ. Օտտենի կարծիքով, կարող է կազմել Խաթթուսիլիս III-ի հայտնի նամակի մասը՝ KBo XVIII 28²⁹:

10) I-NA ^{URU}Kum-ma-hi ku-it TUP-PU [.....]

«Կուլմախայում աղյուսակը [.....]»:

10. Bo 4264

Հ. Օտտենը չի հղում Կուլմախայի հիշատակության մասին հատվածը:

Վերը հղված տեքստային նյութերով սահմանափակվում են Կուլմախայի վերաբերյալ հիշատակությունները: Դրանք հնարավորություն են ընձեռում որոշակի պատկերացում կազմելու Խեթական տերության և Կուլմախայի փոխհարաբերությունների բնույթի, վերջինիս կարգավիճակի և խաղացած դերի մասին: Տեքստերը կարելի է խմբավորել ըստ դրանց բնույթի:

²⁸ H. O t t e n. Kummaha.– In: “Reallexikon der Assyriologie” VI/2, 1980-1983, S. 334.

²⁹ Այս նամակը հրատարակված է Ա.Հագենբուխերի կողմից (A. H a g e n - b u c h n e r. Die Korrespondenz der Hethiter, Heidelberg, Bd. II, 1989, N305, S. 406ff.):

Կուլմմախայի կարգավիճակը

KBo II 9 և KUB XV 34 (4ա և 4բ)

KUB LV 1 (6)

Առաջին տեքստում Կուլմմախան հստակ թվարկվում է որպես ինքնուրույն քաղաքական միավոր՝ Հայկական լեռնաշխարհի երեք այլ երկրների շարքում (Ալզի, Պապա(ն)խի, Հայասա):

Դեռ է. Ֆոռերն էր նկատել, որ Կուլմմախան եղել է ինքնուրույն քաղաքական միավոր (տե՛ս վերը), սակայն հայագիտական հետազոտություններում, Գր. Ղափանցյանից սկսած, արմատացել է այն մտայնությունը, որ Կուլմմախան պիտի կազմեր Հայասայի մասը¹⁰: Այսպիսի ենթադրություն համար հիմք էր ծառայել Թուրքիայի III-ի հայասական արչավանքի ընթացքում Կուլմմախայի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին հիշատակությունը (KUB XIX 11, №3): Այս առնչությամբ հարկ է նշել, որ վերոհիշյալ տեքստը որևէ հիմք չի տալիս նման ենթադրության համար: Այստեղ հիշատակվում է միայն Կուլմմախայի մոտ Հայասայի արքա Կարաննիսի և խեթական զորքերի հանգիստման մասին: Հնարավոր է, որ այս արչավանքի նախորդին Կուլմմախան ժամանակավորապես նվաճվել էր հայասացիների կողմից:

Երկրորդ տեքստում հիշատակվող «Կուլմմախայի լեռան պահակը», որ պիտի մեկնաբանել որպես հիշյալ քաղաքի մերձակայքում գտնվող ինչ-որ լեռան վրա գտնվող սահմանային ամրոց, հագիվ թե նշանակի այլ բան, քան տեքստի կազմման պահին Կուլմմախայի և շրջակա տարածքի խեթական գերիշխանության տակ գտնվելը:

Վերինեփրատյան տարածաշրջանում Կուլմմախայի կարգավիճակն արտացոլող աղբյուրների տվյալների մեկնաբանության ճշգրտությունը կախված է գրանց թվագրումից: Դժբախտաբար, միայն KUB LV 1-ն է հստակ թվագրվում ինքնուրույն III – Թուրքիայի IV ժամանակահատվածով: Ինչ վերաբերում է առաջին տեքստին, ապա այն զգալիորեն ավելի վաղ շրջանի պիտի պատկանի, հնարավոր է, նույնիսկ «միջին խեթական» փուլին (Արնուվանդաս I կամ քիչ ավելի ուշ): Եթե այդպես է, ապա երկու տեքստերի միջև առկա է շուրջ մեկ դար ընդմիջում, որի ընթացքում քննարկվող տարածաշրջանում կարող էին վարչաքաղաքական լուրջ տեղաշարժեր լինել:

30 Г р. К а п а н ц я н. Хайаса..., с. 47сл.: KBo II 9-ի և KUB XV 34-ի Հայասայի և Կուլմմախայի առանձին քաղաքական միավորներ լինելու մասին անդեկությունը Գր. Ղափանցյանը չէր ընդունում, գտնելով, որ այստեղ KUR^{URU}Kummahaz KUR URUHaisasaz-ը պիտի ընկալել որպես «Կուլմմախայից՝ Հայասայի քաղաքից»: Այս մոտեցումը որևէ կերպ հնարավոր չէ արդարացնել, քանի որ երկու տեքստերում առկա տեղանունների մեծ ցանկում հիշատակվող բոլոր երկրները, որպես կանոն, ինքնուրույն միավորներ են և պարզ չէ, թե ինչու պիտի Հայասայի և Կուլմմախայի հարցում նման բացատրություն լիներ: Մանավանդ, որ Կուլմմախայից հետո, ինչպես մյուս երկրներից հետո, առկա է «արի» բայաձևը: Ի դեպ, Ն. Մանանդյանը, հենվելով Հայասայի տեղադրության մասին իր տեսակետի վրա (Վանա լճից մինչև Եփրատի վերին հոսանքները), չէր ընդունում այն (Я. М а н а н - Д я н. Նշվ. աշխ., էջ 76): Նրա կարծիքով, Կուլմմախան գտնվել է Հայասայի հարող խեթական տարածք համարվող «Վերին երկրի» կազմում:

Կուլմմախայի կարգավիճակը լուսաբանող տեքստերը, նաև մնացած բոլորը որևէ տեղեկություն չեն պահպանել ինչպես այս քաղաքական միավորի տարածքի, այնպես էլ տեղական իշխանությունների մասին:

Կուլմմախան խեթական տերությունների արևելյան քաղաքականությունների մեջ

KUB XXIII 72+ (1)

KUB XIX 11 (3)

IBoT I 36 (2)

Առաջին տեքստում Կուլմմախան հանգես է գալիս որպես խեթական տերության քաղաքական շահերի կենտրոնում գտնվող քաղաք, որը ենթարկվել էր Պախտուվայի և Արխիտայի հարձակմանը: Եթե նկատի ունենանք, որ վերջինս հետագայում հիշատակվող Հայասայի մասն էր կաղմում, ապա տեղին է նկատել, որ Կուլմմախան անմիջականորեն հարում էր Հայասային Եփրատի վերին հոսանքների շրջանում՝ Խուլվայից հյուսիս:

Երկրորդ տեքստի վկայությունը Կուլմմախայի մոտ խեթական գործի և Հայասայի արքա Կարաննիսի միջև ճակատամարտի վերաբերյալ, հակասորեն լրացնում է առաջին տեքստի տեղեկությունը. Կուլմմախան ինքնին և Հայասայի միջև անմիջական շփման վայրն էր:

Երրորդ տեքստը կարող է վկայել հոգուտ հետևյալ ենթադրություն: Կուլմմախան Արնուվանդաս I-ի օրոք չի գտնվել ինքնին անմիջական տիրապետության տակ (այն կոչվում է «գրսի երկիր»), սակայն ինքնին հետ թշնամական հարաբերություններ չի ունեցել. տեքստում Կուլմմախան հակադրված է «թշնամական» կասկերին: խեթական արքայական պալատի պահպանության համար Կուլմմախայից գինվորներ էին հավաքագրվում: Թերևս, հնարավոր է ենթադրել միայն Կուլմմախայի նկատմամբ խեթերի ունեցած որոշակի քաղաքական ազդեցություն:

Ինչպես կարելի է պատկերացնել Կուլմմախայի նկատմամբ խեթական վերահսկողության փաստը՝ մի կողմից Խուլվայի (հարավից), մյուս կողմից՝ գերազանցապես թշնամական Հայասայի միջև: Դեռ ժամանակին Ջ.-Գարստանգը, քննարկելով սույն տարածաշրջանի տեղագրության հարցերը, նշել էր, որ «Կուլմմախան դարպաս է հարավից դեպի Հայասայի տարածք»³¹: խեթական բնօրրանից դեպի Վերին Եփրատի ավազան ռազմավարական ուղիները, Սեբաստիայից արևելք, երկուսն էին. ա) Սեբաստիայից Հալիսի ափերով դեպի Ջարա, այնուհետև՝ արևելք, բ) Սեբաստիայից քիչ հարավ, հետո դեպի ժամանակակից Կանդալ – Դիվրիդի – Պինգան, որից հետո՝ Սեբաստիա – Կեմախ երկաթգծով:

Այսպիսով, Կուլմմախան արտակարգ կարևոր ռազմավարական գիրք ուներ Եփրատի վերին հոսանքների շրջանում, որի նկատմամբ վերահսկողությունը կարող էր թույլ տալ զսպելու դեպից հյուսիս և հարավ ընկած շրջանները՝ Խուլվան և Հայասան: խեթական պահակապետի առկայությունը

31 J. G a r s t a n g. Hittite Military Roads in Asia Minor.— “American Journal of Archaeology”, 1943, p. 50.

նը Կուլմմախայի լեռան վրա կարող է վկայել այն մասին, որ այս տարածքը պիտի կազմեր խեթական վերահսկողությունից սահմանը:

Կուլմմախայի ինքնուրույն կարգավիճակի և ռազմավարական դիրքի խնդիրների առնչությամբ մի կարևոր խնդիր է ծագում՝ որ տարածքի վարչական (նաև պաշտամունքային) կենտրոնը պիտի կազմեր այս քաղաքը: Դժբախտաբար, առայժմ պարզ չէ խեթական դարաշրջանի Կուլմմախայի ստույգ տեղագրությունը: Հայադիտական ուսումնասիրություններում վաղ հայկական աղբյուրների Անի-Կամախր առաջարկվել է դիտել որպես Եփրատի երկու ափերին տեղագրված ինքնուրույն միավորներ: Ս.Երեմյանի կարծիքով³² Անին եղել է սրբավայր, իսկ Կամախր՝ արքայական դամբարան: Բ. Հարությունյանը գտնում է, որ սրբավայրը և արքայական ամրոցը դտնվել են դեռ առաջին հազարամյակից, իսկ դամբարանը՝ ձախ³³ վերջինս հակված է ենթադրելու, որ սրանք նախապես կազմել են մեկ միասնություն:

Բ. Հարությունյանի տեսակետը, բնականաբար, ավելի տրամաբանական է, քանզի բնակավայրը (լինի դա արքունական ամրոց, թե սովորական բնակավայր) էր կարող ներառել դամբարանը: Այստեղ խնդիրն այլ է. գետի երկու ափերին տեղագրված մեկ վարչական միավորի (քաղաք կամ փոքր բնակավայր) առկայությունը մասին ենթադրությունը, որն ինքնին արդեն ստիպում է ընդունել, որ Եփրատի երկու ափերին ընկած մի որոշակի շրջան պիտի կազմեր այն վարչական միավորը, որի կենտրոնը եղել է Կուլմմախան: Արդյոք խեթական դարաշրջանում Կուլմմախա կենտրոնով վարչաքաղաքական միավորի սահմանները որևէ կերպ կարող էին գոլգոհեմվել հետագայի հայկական Դարանաղիին, պարզ չէ³⁴:

Ծիսապաշտամունքային գործոն

KUB XL 83 (5)

KUB LV 1 (6)

IBoT I 33 (7)

KUB XXXVIII 12 (8)

Դժբախտաբար, Կուլմմախայի ծիսապաշտամունքային գերի մասին առկա տեղեկությունները խիստ սահմանափակ են, չնայած պահպանվածն էլ լիովին բավարար է ենթադրելու, որ քաղաքը կարևոր նշանակություն է ունեցել սույն ասպարեզում:

KUB LV 1-ում հիշատակվում է Կուլմմախայում դտնվող Պիրվա աստծո ժայռափոր տաճարը (¹A4 hekur), որտեղ թերացել են աստծուն երկրպագել, նշվում է նաև տաճարին կից «պալատին» պատկանող մշակովի գաշտը և արոտավայրը: Կուլմմախայում ¹n² hekur-ի առկայությունը, հնարավոր է, ապացուցվում է նաև հնադիտորեն: Ժամանակակից Կեմախի ամրոցի տա-

32 Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի». Երևան, 1963, էջ 35–36:

33 Բ. Հարությունյան. Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույցի». Երևան, 2001, էջ 62:

34 Դարանաղյաց գավառի սահմանների մասին տե՛ս նույն տեղում, էջ 61–65:

րածքում հայտնի է ուրարտական ժայռափոր սրբավայր³⁵. կարելի է ենթադրել, որ այն գործել է նաև ավելի վաղ խեթական փուլում:

^{N14}hekur տաճարի առկայությունը Կուլմախայում վկայում է սուլյն աստծո պաշտամունքի տարածվածություն մասին, քանի որ նման տաճարները խեթական տերությունում բավական քիչ են: Ի գեպ, Պիրվայի ^{N14}hekur-ը բազմիցս հիշատակվում է Խաթթուսիլիս III-ի հայտնի տեքստում, որը հենց հրովարտակ է Պիրվայի ^{N14}hekur-ին պատկանող տաճարը հարկերից ազատելու մասին³⁶: Արգյոք վերահիշյալ տեքստը վերաբերում է Կուլմախայի տաճարին, թե ոչ, գտվար է ասել: Նկատի ունենալով KUB LV 1-ում հիշատակվող Կուլմախայի Պիրվա աստծո ^{N14}hekur-ի հարցում խեթական արքայի մտահոգությունը (տեքստը պայմանականորեն թվագրվում է Խաթթուսիլիս III-ի կամ նրա որդու՝ Թուդխալիյաս IV-ի ժամանակներով, տե՛ս վերը), թերևս, KBo VI 28+-ը նույնպես պիտի վերաբերի Կուլմախային: Այս առնչությամբ հարկ է նշել նաև, որ Պիրվայի պաշտամունքի առկայությունը խեթական տեքստերում, լավ վկայված է Կուլմախայից հարավ գտնվող Իսուվայում³⁷:

KUB XXXVIII 12-ը վկայում է այն մասին, որ Կուլմախայի Ամպրոպի աստվածը ներառված է եղել խեթական տերության պաշտոնական պաշտամունքային համակարգում: Ի գեպ, նման կարգավիճակ են ունեցել նաև հարևան Հայասայի ^dU.GUR-ը (= Ներգայ) և «Հայասայի Ամպրոպի աստվածը»³⁸:

Վերահիշյալ երկու տեքստերը, ըստ ամենայնի, լավագույն ապացույցն են հոգուտ այն ենթադրության³⁹, որ խեթական տեքստերից և բարձրա-

35 F. I § 1 k. Die offenen Felsheiligtümer Urartus und ihre Beziehungen zu denen der Hethiter und Phryger. Roma, 1995, S. 15f.: Բնութագրական է, որ նման սրբավայրերը լայնորեն տարածված են վերինփրատյան գոտում: Նշենք դրանցից Պերտեկի, Երդնկայի, Ալթրնթեֆեի, էրզրումի, Ումուգուլմի, Ջենգերլիի և հատկապես ավելի հարավ ընկած պատմական Իսուվայի բազմաթիվ այլ սրբավայրեր (ըստ նույն աշխատության):

36 KBo VI 28 + KUB XXVI 48 (= CTH 88). այս տեքստը առայժմ չունի ամբողջական գիտական հրատարակություն, սակայն գրա որոշ կարևոր հատվածներ կանոնավոր հղվում են մասնագիտական գրականության մեջ (E. F o r t e r. Forschungen. I. 1, 1926, S. 35ff.; A. G o e t z e. Kizzuwatna, p. 21ff. և այլն): Սա այն տեքստն է, որի սկզբում հիշատակվում է արքայի հեռավոր նախնիներից մեկի օրոք (Թուդխալիյաս III) խեթական տերության վրա բոլոր հարևանների հարձակման մասին, որոնց թվում էին Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների երկրները՝ Ազգին, Իսուվան և Արմատանան:

37 Դրանցից հատկապես հիշատակելի է IBoT II 131-ը, որտեղ Իսուվայի արքան Հանգես է գալիս Պիրվա աստծու պաշտամունքին նվիրված ծիսակատարությունների առնչությամբ մի շարք քաղաքներում. վերջիններս առայժմ չեն տեղագրվում, սակայն, ամենայն հավանականությամբ, պիտի գտնվեն մ.թ.ա. XIII դ. Իսուվայի թագավորության ենթակայության տակ:

38 KUB XII 2 ԴԿ 24. այստեղ «Հայասայի Ամպրոպի աստծո» արձանիկը սպասարկող քուրմ Վաննիի հետ միասին հիշատակվում է խեթական մայրաքաղաք Խաթթուսսում կամ մոտակա ինչ-որ խոշոր պաշտամունքային կենտրոնում գտնվող huwası կոչվող տաճարի ծիսական ինվենտարում:

39 В я ч. В с. И в а н о в. Пирва. - В кн.: "Мифы народов мира", т. 2, М., 1988 (II изд.), с.313, նաև С. А. Н и к о л а е в, А. Б. С т р а х о в. К названию бога-громовержца в индоевропейских языках. - В сб.: "Балто-славянские исследования" 1985, М., 1987, с. 160. Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Արամի առասպելը հնգեվորոպական առասպելաբանության համատեքստում և Հայոց աղգածագման խնդիրը. Երևան, 1997, էջ 149-150 (այլ կարծիքների հղումներով): Պիրվայի մասին խեթական տեքստերի

քանդակներից հայանի Պիրվան ունի Ամպրոպի աստծու ատրիբուտները (Պիրվայի սրբազան թռչունը արծիվն է, նա պատկերված է ձի հեծած, խեթերենում առկա է *peruna*- «ժայռ» բառը, որ համահունչ է «ժայռափոր սրբավայրի» երևույթի հետ): Պիրվայի անունը հանգում է Հ.—ե. *Peru-nos-ին, որից հին սլավոնական Ամպրոպի աստված *Perun*-ը:

Հաջորդ տեքստը (ԽՅԻ I 33) հիշատակում է Կոնստանտինոպոլիսում գտնվող ինչ-որ տաճարում կատարված գուշակություն, որի արդյունքները կարևոր նշանակություն ունեն խեթական արքայի համար: Իսկ KUB XL 83-ը ուղղակիորեն հիշատակում է Կոնստանտինոպոլիսում գտնվող անտառում (գուցե նաև՝ պուրակ) խեթական արքայատոհմի մի շարք ներկայացուցիչների անձի հանդեպ կատարված սև մոգության գործողությունը: Այս երկրորդ տեքստը առանձնահատուկ նշանակություն կարող է ունենալ այստեղ գոյություն ունեցած՝ անդրաշխարհին առնչվող պաշտամունքային կենտրոնի առկայության մասին: Թերևս, ավելորդ է չի լինի հիշել վաղ հայկական Անի-Կամախում հայոց արքայական դամբարանի առկայության փաստը (տե՛ս հոդվածի սկիզբը):

Այսպիսով, խեթական սեպագիր աղբյուրների տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ Անի-Կամախը առնվազն մ.թ.ա. II հազարամյակի կեսերից (ամենայն հավանականությամբ, շատ ավելի վաղ) հանդիսացել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի կարևոր քաղաքական և պաշտամունքային կենտրոններից մեկը, որն իր նշանակությունը պահպանել է նաև հետագա ժամանակներում: Գտնվելով վերինեփրատյան տարածաշրջանի երկու առաջատար քաղաքական միավորների՝ Հայաստան-Ազգիի և Իսուվայի անմիջական մերձակցությամբ, այն սլիտի զգալի դեր ունենար Հայկական էթնոսի ձևավորման գործընթացում, հատկապես դրա հոգևոր-պաշտամունքային բնագավառում⁴⁰:

АНИ-КАМАХ В ХЕТТСКИЙ ПЕРИОД

АРАМ КОСЯН

Резюме

Статья посвящена древнейшей истории важного культового центра дохристианской Армении — города Ани (позже Камах). Этот город засвидетельствован в хеттских клинописных текстах XV-XIII вв. до н.э., в различных контекстах — политическом, административном и культовом. Процитированные контексты из хеттских клинописных текстов, упоминающих Куммаху (арм. Камах), свидетельствуют о существовании комплексных взаимоотношений между этим городом и Хеттской империей. Куммаха являлась важной полити-

վկայությունների համար տես՝ Н. О t t e n. Pirwa. der Gott auf dem Pferde.— "Jahrbuch für kleinasiatische Forschung" II, 1952–53, S. 62ff.

40 Անի-Կամախին նվիրված համապարփակ ուսումնասիրությունը Ա. Ե. Պետրոսյանի համահեղինակությամբ լույս կտեսնի առաջիկայում:

ческой единицей и культовым центром, находившемся между двумя наиболее влиятельными странами верхнеевфратской долины – Хайасой-Аззи и Исувой (арм. Цопк). Источники дают некоторое основание для восстановления роли города Куммаха в военно-политической и культовой жизни региона.

ANI-KAMAKH IN THE HITTITE PERIOD

ARAM KOSYAN

S u m m a r y

The paper deals with the earliest history of the city of Ani (later Kamakh) - the prominent cult center of pre-Christian Armenia. This city is attested to in the Hittite cuneiform texts of the 15th–18th c. B.C. in different contexts - political, administrative and cultic. The quoted passages from Hittite cuneiform texts referring to Kummaha (= Armenian Kamakh), illustrate the existence of complex relations between this city and the Hittite Empire. Kummaha was an important political unit and cult center, situated between two most influential countries of the Upper Euphrates valley - Hayasa-Azzi and Isuwa (Arm. Tsopk). The extant sources give some clue for reconstruction of the role of Kummaha in the military-political and cultic life of the region.